ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԳՐԱՎԱԾ ՓՈՐՁԱԳԵՏ ԱՇԽԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՄԱՐՏ-ՀՈՒԼԻՍ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ

Ի կատարումն 2022 թվականի մարտի 14-ին կնքված աշխատանքային պայմանագրի (փորձագետ ընդգրկելու վերաբերյալ) ներկայացնում եմ իմ կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը:

Հաշվետու ժամանակահատվածում իմ կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. մասնակցել եմ Պետական գույքի կառավարման ոլորտի բարեփոխումների ռազմավարության մշակման աշխատանքներին, որն ընդունվել է ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 14-ի թիվ 1063-Լ որոշմամբ,

2. մասնակցել եմ պետական գույքային հարաբերությունները կանոնակարգող ՀՀ օրենքների նախագծերի, իրավական ակտերի և նախագծերի քննարկմանը և մշակմանը,

3. մասնակցել եմ պետական գույքի կառավարման ոլորտին առնչվող պետական մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերի քննարկմանը և մշակմանը,

4. մասնակցել եմ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 100-րդ կետի կատարման նախապատրաստական աշխատանքներին, որի շրջանակներում հավաքագրել և ամփոփել եմ ՀՀ պետական մարմինների կողմից ներկայացված տեղեկատվությունը,

5. մասնակցել եմ քաղաքացիների կողմից բարձրացված դիմում-բողոքների քննարկումներին և պատրաստել պատասխան գրություններ,

6. կատարել եմ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի, նախագահի տեղակալի և գլխավոր քարտուղարի կողմից պետական գույքի կառավարման կանոնակարգմանն առնչվող հանձնարարականները, ինչպես նաև մասնակցել եմ պետական գույքի կառավարման կոմիտեի իրավական ակտերի և մեթոդական ուղեցույցների մշակման և պետական գույքի կառավարման ծրագրերի և ռազմավարական փաստաթղթերի մշակման բաժինների գործառույթներին վերաբերող մեթոդական բնույթի ընթացիկ աշխատանքների կատարմանը:

ՓՈՐՁԱԳԵՏ՝ **ԱՇԽԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

29.07.2022թ.